

ՂԱՄԱՐԼՈՒԻ ՇՐՋԱՆԻ

ԽԱՂՈՂԻ ՅԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ
ՈՒ ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ

1937 թ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

1937

ՏԵՐԵՎԱՆ

634
Ղ-99

24 SEP 2010

634
2-29

42

ՂԱՍԱՐԼՈՒԻ ԾՐՋԱՆԻ

ԽԱՂՈՂԻ ՅԵՎ ԴՏՂԱՏՈՒ ԱՅԿԻՆԵՐԻ ՈՒ
ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ 1937 Թ.
ԴԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

0105 932 15



703
37

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՅՈՒՄ № 1

20-ը հունվարի 1937 թ.

ՂԱՄԱՐԼՈՒԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

Սաղոդի և պողատու այգիների ու բանջարաբուծական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու և մշակությունը բարձր փորակով կատարելու համար Շրջանային Գործադիր Կոմիտեն վորոշում է.

1. Պարտավորեցնել բոլոր խաղողի և պողատու այգիներ ունեցող և բանջարաբուծության կուլտուրաներ մշակող կուլեկտիվ տնտեսություններին, Սորհրդային տնտեսությանը, կուլտնտեսականներին, մենատնտեսներին և հիմնարկներին 1937 թ. ընթացքում նշած կուլտուրաները մշակել գործկոմի կողմից հաստատված՝ խաղողի և պողատու այգիների ու բանջարաբուծության պարտադիր ագրոկանոնների համաձայն:

2. Հողբաժնին, ՄՏԿ-ին, գյուղխորհուրդներին և կուլտընտ. վարչություններին՝ խաղողի և պողատու այգիների ու բանջարաբուծության պարտադիր ագրոկանոնները լայն կերպով քննել ու մասսայականացնել կուլտնտեսության ընդհանուր և հասարակական ժողովներում և առանձին բրիգադներում:

3. Հողբաժնին և գյուղխորհուրդներին՝ խիստ հսկողություն սահմանել ագրոկանոնները ճշգրիտ և բարձր փորակով կատարելու:

4. Ագրոկանոնների վորևե կետը խախտողներին յենթարկել պատասխանատվության վարչական կարգով տուգանքի մինչև 50 ռ., կամ հարկադիր աշխատանքի մինչև 15 օր:

5. Չարամտորեն խախտողներին յենթարկել դատական պատասխանատվության:

6. Գյուղխորհուրդների վորոշումների դեմ կարելի չէ բողոքարկել Շրջգործկոմին 7 օրվա ընթացքում:

7. Սույն վորոշումն ուժի մեջ է մինչև 1937 թ. դեկտեմբերի 31-ը:

Շրջգործկոմի նախագահ՝
(ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)
Շրջգործկոմի քարտուղար՝
(ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

ԽԱՂՈՂԻ ՅԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՋԵՈՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Շրջանում խաղողի և պտղատու այգիներ ունեցող խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները, կոլտնտեսականները, մենատնտեսները և հիմնարկները պարտավոր են իրենց այգիները մշակել, լրել և բարձր վորակով կիրառելով հետևյալ ագրոձեռնարկումները:

1. Խաղողի այգիների վաղերը բաց անել վաղ գարնանը, ձյունը հալվելուց հետո մինչև հյութաշարժությունը, մարտի 10-ից մինչև ապրիլի 5-ը, յերբ հնարավոր է այգին մտնել:

2. Մինչև վաղի ետելը, կամ ետին զուգընթաց, հին այգու բաց տեղերը լրացնել անդալիսով կամ արմատկալածներով, իսկ նոր այգիները վերանորոգել 1—2 տարեկան արմատալալածներով:

Այս աշխատանքները կատարել գարնանը՝ մարտի 15-ից մինչև ապրիլի 10-ը:

3. Այգիների վերանորոգումը կատարել արմատալալածներով նաև աշնանը՝ հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 10-ը:

4. Նույն բոլոր այգիներն այգեբացին զուգընթաց, փորձված մարդկանց միջոցով: Թույլ վաղերը կարճ ետել, թողնելով սահմանված քանակով մատեր:

Ետը վեջացնել մինչև բողբոջների (աչքերի) բացվելը, այն է՝ մարտի 15-ից մինչև ապրիլի 10-ը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն վազերը, վորոնք համարա-
կարված են (ապրորացիայի յեն յեն թարկված) կտրոններ
վերցնելու համար ետեղ նախորոք, տնկելու համար պիտա-
նի կտրոնները շոկել, խրձեր կապել յերկուհարյուրական
հատից, վրան ամրացնել փոփոխակի անունը կամ համարը,
պահել խրամատներում պառկեցրած ու հողով ծածկած ձե-
վով, մինչև ոգտագործելը:

5. Փորել բոլոր այգիներն ետին դուզնթաց, համա-
տարած կերպով թե թմբերը և թե թմբերի մեջը,
մարտի 15-ից մինչև ապրիլի 25-ը: Փորելու աշխատանք-
ները դադարեցնել բողբոջման և ծաղկման շրջանում:

Թմբերը փորել մինչև 25 սմ իսկ թմբերի մեջը՝
18—20 սմ խորությամբ:

Այգեփորի ժամանակ վոչնչացնել մակերևութային
արմատները (մորուսը), հավաքել չայիրը, դանդուղանը
և հանել այգուց դուրս:

6. Նվազ թույլ այգիները պարարտացնել հանքային
և տեղական պարարտանյութերով, հողբաժնի կողմից սըր-
ված հրահանգի համաձայն:

7. Կատարել կանաչ հատում (սուղ տալ) 2 անգամ:
1-ին սուղը տալ մինչև ծաղկելը՝ 15—25 մայիսի, 2-րդ
սուղը տալ ծաղկից հետո՝ հունիսի 15-ից մինչև հու-
լիսի 5-ը:

Սուղը տալիս մաքրել վազը չորուկներից և յեղունգ-
ներից:

2-րդ սուղը կատարել սեկատորով կամ սուր դա-
նակներով:

8. Վազերը մոլախոտներից մաքուր պահելու համար
կատարել քաղհան, 1-ին անգամ մայիսի 15-ից մինչև
25-ը, 2-րդ անգամ՝ հունիսի 15-ից մինչև հուլիսի 5-ը:

9. Խաղողի այգիների բուժումը բորդոյան հեղուկով
(պղնձարջասպի լուծույթով) կատարել յերկու անգամ.
1-ին անգամ մինչև ծաղկելը՝ մայիսի 5-ից մինչև 20-ը:

2-րդ անգամ ծաղկելուց հետո՝ դուռան բռնած ժամանակ՝
հունիսի 15-ից—30-ը, և 3-րդ անգամ՝ անհրաժեշտության
դեպքում:

10. Ուղղումի դեմ պայքարելու համար այգիները
փոշոտել ծծմբով յերկու անգամ, 1-ին անգամ՝ վազերի
ծաղկած ժամանակ, իսկ 2-րդ անգամ՝ խաղողալիցին:

11. Վազերից և առունների յեղերքից դայուկը հա-
վաքել նկատվելիս անմիջապես, չթողնել վազի մատերին
փաթաթվի. հավաքածն այգուց դուրս հանել և վոչնչ-
նացնել:

12. Բերքատու այգիները խշմարել (հաշա տալ) դու-
ռան բռնած ժամանակ՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը,
և լրացում կատարել հուլիսի 25-ից մինչև ոգոստոսի 10-ը:

13. Այգիները ջրել հետևյալ ժամկետներին.

1-ին ջուրը տալ ապրիլի 15-ից մինչև մայիսի 20-ը
(մինչև ծաղկելը), 2-րդ ջուրը տալ դուռայի շրբ-
ջանում՝ հունիսի 15-ից մինչև հուլիսի 10-ը, 3-րդ ջուրը
տալ դուռան լցվելու շրջանում՝ հուլիսի 20-ից մինչև
ոգոստոսի 15-ը, 4-րդ ջուրը տալ ոգոստոսի 25-ից մինչև
սեպտեմբերի 15-ը:

Այգիները ջրել նաև ձմրանը՝ դեկտեմբերի 15-ից
մինչև փետրվարի 15-ը:

14. Սակավաքանակ բոլոր փոփոխակները՝ քիշմիշ,
յեզանդարի, խալիլի, ասկյարի, հաշաբաշ, իծապտուկ, ալախ-
կի և այլն, յենթարկել ապրորացիայի, այսինքն հա-
մարակալել, վորպեսզի հաջորդ զարնանն ետեղու ժամա-
նակ նշած տեսակներից կտրոններ վերցվեն և բազմացվեն:

15. Կատարել մասսայական ընտրություն լավ բեր-
քատու և վոչ բերքատու վազերի նկատմամբ, վորոնց վրա
դնել նշաններ և հետագայում լավ բերքատուները բազ-
մացնել, իսկ վատ բերքատուները հանել և տեղը տնկել
բերքատու վազեր:

16. Խաղողահատից մինչև բերքահավաքի վերջը հատուկ պահակների միջոցով պահպանել այգիները գողությունից, կրծողներից և այլ կորուստներից:

17. Բերքահավաքը կատարել առանց կորուստների, դանակներով հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 1-ը:

18. Բերքահավաքին զուգընթաց հավաքել խչմարը, խրճեր կապել և պահպանել հոկտեմբերի 6-ից մինչև նոյեմբերի 2-ը:

19. Բերքահավաքին զուգընթաց կատարել վագերի ծերկապ:

Հիմնական այգեթաղը կատարել խնամքով, վորպեսզի մատերը չջարգվեն և բաց տեղեր չմնան՝ հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 20-ը:

20. Խստիվ արգելվում է՝ ա) այգեփորից հետո մեկ ամիս շուտ ջրել, բ) այգիների ջրելը ծաղկման շրջանում, գ) այգիների ջրելը սեպտեմբերի 15-ից հետո, դ) քաղած և չքաղած այգիներում անասուններ արածեցնելը:

ԽԱՂՈՂԻ ՆՈՐ ԱՅԳՈՒ ՏՆԿԵԼԸ

1. Նախ՝ ուսումնասիրել այն հողամասերը, վորտեղ այգի յե տնկվելու (վերնաշերտի պիտանի հողի խորությունը, քարքարոտությունը, կալիանող, ավազանող վիճակը և այլն:

Հողամասի ընտրությունը և տերիտորիայի կազմակերպումը պետք է ապահովի հետևյալ պահանջները.

ա) արտադրական պրոցեսների մաքսիմալ մեքենայացումը.

բ) աշխատանքի բարձր արտադրողականությունը.

գ) արտադրվող խաղողի միսիմալ խնճարժեքը, բարձր բերքատվությունը և վորակի բարձրացումը.

դ) ընտրված հողամասը պետք է կազմի մի մասսիվ, ապահովված ջրով, սափայն աղային և ճանճային չափաքան է լինի.

ե) հողամասն ընտրելուց հետո հանել հատակագիծը և բաժանել արտադրական վանդակների, ըստ հնարավորության՝ ուղղանկյուն քառանկյան ձևով.

զ) հատակագծում ցույց տալ արտադրական վանդակները, հեկտարները, վորոգող առուները, ճանապարհների և շարքերի ուղղությունները: Վերջինս պետք է ապահովի վորագումը:

Բաժանումն անպայմանորեն պետք է ապահովի լրիվ վորոգումը, յեխելով հողի դիրքից: Այս աշխատանքները կատարել հողաշինարարի և ագրոնոմի միջոցով:

2. Վանդակները պետք է բաժանվեն ճանապարհներով և ջրային ցանցով: Վանդակների մի կողմի յերկարությունը (շարքերին զուգահեռ) պետք է լինի 100 մետր, իսկ մյուս կողմը (շարքերին ուղղահայաց)՝ 500 մետր: Այդպիսով վանդակի մեծությունը լինում է 5 հեկտար: Յեթե հողամասի ռելյեֆը (մեծ թեքություն, խորգություն և այլն) չի թույլատրում, կարելի յե վանդակների կողմերի յերկարությունը խախտել՝ պահպանելով այն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Հին այգիները մասսիվացնելու նպատակով, տնկվող տարածությունները (այգիների մեջ ընկած հողակտորները) կարող են փոքր լինել:

Արտադրական հողալսույթներ. — Մի շարք վանդակներ հաջորդաբար իրար շարունակություն կազմելով՝ պետք է ապահովեն ագրոաշխատանքների անարգել կատարումը, քաջող ուժի ռացիոնալ ռգտագործումը և վորոգման ջրերի տնտեսումն այն հողամասերում, վորպեսզի տրակտորն աշխատի առնվազն մի կիլոմետր յերկարության վրա, առանց պտույտներ գործելու, անհրաժեշտ է, վոր հողակտորի յերկարությունը շարքերի ուղղությամբ մեկ կիլոմետրից պակաս չլինի, այսպիսով հողակտորը կազմված պետք է լինի միմյանց հաջորդող 10 վանդակից:

4. Ճանապարհներ յեվ ջրային ցանց. — Վանդակներն իրարից բաժանվում են ճանապարհներով, այն ճանապարհները, վորոնք ուղղահայաց են շարքերին, և վորոնց կողքերով վորոգող առուներ են անցնում, պետք է ունենան

6,5 մետր լայնություն, իսկ շարքերին զուգահեռ ճանապարհների լայնությունն առանց առունների՝ 5,5 մետր, իսկ հողակտորի յեզրի շարքերի ուղղահայաց ճանապարհները, վորտեղ շուռ ե գալիս քաշող ուժը—տրակտորը, պետք ե ունենա 5—8 մետր լայնություն:

5. Հողի նախապատրաստելը.—Ընտրված հողամասը յեթե մեծ թեքություն չունի, քարքարոտ չե և բավարար մեծություն ունի, մեքենայով կատարել համատարած հիմնաշրջում(խոր վար, պլանտաժ), հակառակ պարագայում հիմնաշրջումը կատարել ժապավենաձև: Համատարած հիմնաշրջումը կատարելիս խորությունը պետք ե լինի 50 սմ, իսկ ժապավենաձև կատարելիս խորությունը պետք ե լինի նույնը, իսկ լայնությունը՝ 60 սմ:

Իբրև կանոն, գարնան տնկվելիք այգիների պլանտաժը կատարել աշնանը, իսկ աշնանը տնկվելիք պլանտաժը՝ ամառը կամ աշնանը, վերջին դեպքում վոչ ուշ, քան հոկտեմբերին: Յեթե վորևե պատճառով նշված ժամանակներում պլանտաժը չի կատարվում, անհրաժեշտ ե համատարած պլանտաժը կատարել 30—40 որ տնկելուց առաջ:

6. Հողամասի ձեվերը (ռազբիվկա).—Նախապես կազմած հողամասի հատակագծի համաձայն, հողամասի համապատասխան տեղերում արտադրական միավորների վանդակների, առունների, ճանապարհների և այլ վորոշիչ սահմաններում տնկել նշաններ—ցցեր խփել:

Վանդակներում շարքերի և առանձին վագերի տեղերը պետք ե վորոշել հետևյալ կերպ: Յուրաքանչյուր վանդակ ըստ հնարավորության բաժանել մեկական հեկտարի (հատակագծի վրա նույնպես պետք ե ցույց տալ նաև հեկտարների բաժանումը): Ապա լարով վորոշել շարքերի և վագերի տեղերը, հետևյալ կերպով՝ շարքերի տեղերը վորոշող լարերի (պարանների) վրա նշան անել գունավոր

կտորով յերկու և կես մետր հեռավորությամբ, իսկ վագերի տեղը (տնկիլների տեղը) վորոշել լարերի վրա մեկ ու կես մետր հեռավորությամբ:

Այսպիսով միջարքային տարածությունները լինելու յեն 2,5 մետր, իսկ շարքում վաղը վաղից մեկ ու կես մետր հեռավորությամբ:

Շարքերի տեղը վորոշելու համար, ընդունված ուղղությամբ շարքերին ուղղահայաց լարը ձգել յերկու կողմից և համապատասխան նշան արած տեղերում ձողեր տնկել, իսկ վագերի տեղը վորոշելու համար, լարերը ձգել յերկու կողմից շարքերը վորոշող ձողերի միջև, յուրաքանչյուր նշան արած տեղում նույնպես ձողեր խփել տնկելու համար:

7. Յուրաքանչյուր վանդակում, նույնիսկ ամբողջ հողամասում տնկել միատեսակ փոփոխակ: Յեթե արմատակալածներ են (շիշակ, երինջ), ապա տնկել 40—45 սմ խորությամբ: Տնկելիս արմատակալածների ներքևի յերեք հանգույցներից առաջացած արմատների ծայրերը կտրել, իսկ զրանից վերև յեղած հանգույցներից առաջացած արմատները կտրել հիմքից: Արմատակալած տնկիլների շվերից թողնել մեկ հատ ամենաուժեղը և ամբողջը կտրել յերկու աչքից միայն. մատի հիմքը պետք ե լինի հողի յերեսին հավասար:

8. Գարնան տնկումն սկսել ապրիլի մեկից և ավարտել ապրիլի 20-ին, կամ մինչև բողբոջների (աչքերի բացվելը, իսկ աշնանը՝ հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 15-ը: Տնկելիս փոսի մեջ լցնել, նախ, քանդված լավորակ հողը և ապա մնացածը: Որվա անկածը ջրել նույն որը յերեկոյան, իսկ հետագայում ջրել ըստ պահանջի, ամբողջ տարածությունը փխրեցնել քեշին, առնվազն 4 անգամ:

Տնկելու համար ոգտագործել արմատակալածներ (շիշակ, երինջ և կարոններ (մատեր):

Կարոնները հավաքել գարնանը՝ ետի ժամանակ, նախապես աշնանն ընտրած (նշան արած կամ համարակալած) վազերից, զեկավարվելով առաջադրված ասորտիմենտով: Կարոնները պետք է լինեն 70 սմ, իսկ կախետը՝ 50—60 սմ՝ յերկարությամբ, առողջ և նորմալ զարգացած: Ամեն կերպ խուսափել թույլ կամ շատ ուժեղ (հոռացած) զարգացած կարոններից: Հավաքած կարոնները դարսել ըստ փոփոխականների, կապել խրճեր 200-ական հատից, գրել և վրան ամրացնել փոփոխակի անոնը կամ համարը, վորպեսզի հետագայում ոգտագործելիս լրար չխառնվեն:

Հավաքած կարոնները պահել սովեր տեղում, փորելով 60—70 սմ խրամասներ, վորոնց մեջ պառկեցնել կրորոնների խրճերը հորիզոնական ձևով և ծածկել հողով, վորպեսզի մինչև տնկելն աչքերը չբացվեն կամ չքանան:

ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գարնան և աշնան տնկումներն արմատակալածներով ապահովելու, տնկած այգիները վերանորոգելու և ասորտիմենտի մեջ մտնող սակավաքանակ փոփոխականների զարգացումն ապահովելու համար, կոլխոզներում կազմակերպել տնկարաններ:

Տնկարանի համար ընտրել թեթև և պարարտ հողամասեր: Հողամասն աշնանը համատարած հիմնաշերջել 50 սմ խորությամբ՝ գարնանը տնկելու համար: Նախքան տնկելը հողամասը հարթել, մաքրել քարերից, չայրից, զանդուրդանից և այլ մոլախոտերի արմատներից:

Կարոնները թաղած տեղից հանելուց հետո, մինչև տնկելը, յերկու կողմից նորոգել և ներքևի ծայրը դնել ջրի մեջ: Տնկելու մոմենտին ջրից հանել և տնկել մեկական հատ, 40 սմ խորությամբ՝ շաբբ շաբբից մեկ մետր և շաբբում՝ կարոնը կարոնից 8—10 սմ հեռավորությամբ:

Հողից վերև թողնել յերկու աչք, վորից ներքևի աչքը հողի մակերեսին հավասար պետք է լինի: Տնկել շիշերով կամ ժաղապենածև հանած առուններում:

Որվա տնկածը նույն օրը ջրել, իսկ ամբողջ սեզոնում ջրել մոտ 10 անգամ, բոտ պահանջի:

Սեզոնի ընթացքում փխրեցնել 5—6 անգամ, ըստ վորում միջշաբաթյան տարածությունները փխրեցնել ձիու կուլտիվատորով, իսկ շաբբերում կարոնների արանքները փխրեցնել ձեռքի ուրազներով:

Կարոնները տնկել մինչև ապրիլի 20-ը կամ մինչև աչքերի բացվելը:

ՆՈՐԱՏՈՒՆԿ ՅԵՎ ՎՈՉ ԲԵՐՔԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԱՅԳՈՒ ՏՆԿՈՒՄԸ

1. Պաղատու այգի տնկելիս, հատուկ ուշադրություն դարձնել հողամասի ընտրությանը, հաշվի առնելով այգու հետագա զարգացումը: Ուսումնասիրել հողը՝ վերնաշերտի պիտանի հողի խորությունը, քարքարոտությունը և այլն:

Պաղատու այգիները կարելի չէ տնկել նաև կավային, քարքարոտ (ղռեր) հողերում, յեթե միայն այդ հողերը նախորդ յուրացվել են այլ կուլտուրաների մշակության միջոցով:

Շոռաքյաթ և ճանճային հողերում այգի չպետք է տնկել:

Հողամասն ընտրելուց հետո մաքրել քարերից և պարարտացնել՝ սկսած սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 10-ը, կամ գարնանը, մինչև մարտի 20-ը:

2. Հողամասի չորս կողմը տնկել քամու դիմադիր ծառեր՝ թթենի, բարդենի, փշատենի և այլն:

Դեպի այգին առաջին շարքում տնկել թթենի, 2-րդ շարքում՝ փշատենի, և 3-րդ շարքում՝ բարդենի:

Շարքերի հեռավորությունը միմյանցից պետք է լինի մեկ ու կես մետր, իսկ շարքերում ծառերի հեռավորությունը միմյանցից պետք է լինի՝ բարդենու համար մեկ մետր, իսկ մյուսների համար՝ մեկուկես մետր: Տնկումները կատարել շախմատային ձևով՝ սկսած մարտի 20-ից մինչև ապրիլի 20-ը:

3. Պաղատու այգիներ տնկելու համար նոր յուրացվող հողամասերը նախորոք պետք է զբաղեցրած լինեն թիթեռնածաղիկ կամ հացահատիկային կուլտուրաներով:

Այգին տնկելուց հետո միջշարքային տարածություններում ցանել բազմամյա խոտաբույսեր, կամ վաղահաս բանջարանոցային կուլտուրաներ: Հողամասը վարել համատարած կերպով, վոչ պակաս 20 ավ խորությամբ՝ սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը, իսկ դարձնանք՝ մինչև մարտի 30-ը:

Գարնան տնկումների համար հողամասը վարել աշնանը, իսկ աշնանը տնկելու համար վարել տնկելուց 1—2 ամիս առաջ:

4. Կատարել հողամասի գծագրում քառակուսի ձևով, իսկ լանջոտ տեղերում տնկել ռելեֆային ձևով, այսինքն՝ լանջին հորիզոնական:

5. Պաղատու ծառերի հեռավորությունը պետք է լինի.

ա) յուրացված հողերում

Ժիրանենու համար	9×9	մետր
խնձորենու »	8×8	»
տանձենու »	7×7	»
դեղձենու »	5×5	»

սալորենու »	6×6	»
բալենու »	7×7	»
սերկեվենու համար	5×5	»

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Խաղողի այգիների բաց տարածություններում տնկելիս կարելի չէ նշած տարածությունները փոքրացնել, յեղնելով տարածության փաստական չորությունից:

բ) նոր յուրացվելիք (դուեր) հողերում.

Ժիրանենու համար	8×8	մետր
խնձորենու »	7×7	»
տանձենու »	6×6	»
դեղձենու »	4×4	»
սալորենու »	5×5	»
բալենու »	6×6	»
սերկեվենու համար	4×4	»

6. Նորատունկ ծիրանենու այգու ծիրանենիների մեջտեղում տնկել մեկական դեղձենի:

7. Տնկման ժամանակ արմատների ծայրերը թարմացնել, թորնելով 20—30 ավ յերկարություն, հեռացնելով հիվանդ ու վնասված արմատները:

8. Նոր այգիներ տնկելիս ղեկավարվել շրջանի համար ընդունված ասորտիմենտի համաձայն, իսկ փոփոխակների դասավորումն այգում կատարել 4—5 շարք հիմնական սորտից, վորից հետո՝ մեկ շարք համապատասխան փոշոտիչի սորտը: Իսկ յեթե փոշոտիչը և փոշոտվողը մնում են ստանդարտի մեջ, այն դեպքում շարքերի դասավորությունը կատարել հավասար, ըստ սորտերի:

9. Տնկիները տնկել փոսերում, վորոնց խորությունը պետք է լինի՝ դեղձենիների համար 40 սմ, մյուսների համար 50 սմ, իսկ լայնությունը 70 սմ, բացի քարքարոտ—դուեր հողերում, վորտեղ, փոսի լայնությունը պետք է լինի մեկ մետր:

10. Հիմնականում կորիզավորների տնկիները տնկել մեկ տարեկան, իսկ հնդավորները՝ յերկու տարեկան հասակում, ստանդարտ ձևի և մեծությամբ:

11. Տնկելիս յեղնել փոսի խորությունից, ըստ այնմ արմատավզիկը փարած հողի մակերևույթից բարձր թողնել 3—8 սմ, վորպեսզի արմատի տակ փխրուն հող մնա: Տնկելուց անմիջապես հետո լրել ջրել: Հետագայում նորատունկ այգիները ջրել 8—10 անգամ, յեղնելով ջրի պահանջից:

12. Տնկելուց անմիջապես հետո հիմնական ճյուղերի ծայրերը ետել—գոլորշիացման մակերեսը պակսեցնելու համար:

Ետել վաղ զարնանը, մինչև բողբոջների բացվելը:

Իսկ յեթե աշնանն ե տնկվում, ետել հաջորդ տարվա զարնանը:

Ծիրանենու և կեռասենու ետը կատարել կողային ճյուղերի կեսի չափով, դեղձենու և բալենու ճյուղերը՝ կեսի կամ մեկ յերրորդի չափով, խնձորենու և տանձենու ուժեղ աճեցողության դեպքում կեսի չափով, իսկ թույլ աճեցողության դեպքում յերկու յերրորդի չափով:

13. Նորատունկ պտղատու ծառերի այգիների միջշարքային տարածությունները կարելի յե ոգտագործել մինչև 8 տարի, իսկ դեղձենունը՝ յերեք տարի, ցանելով առվույտ կամ բանջարանոցային կուլտուրաներ: Յանքը կատարել միջշարքային տարածություններում, ծառերից 1,5 մետր հեռավորությամբ:

14. Բների շուրջը քաղհանել հունիսի 10-ից մինչև 25-ը և հուլիսի 15-ից մինչև 30-ը:

Յուրաքանչյուր յերկու ջրից հետո փերեցնել քեշին մեկ անգամ:

15. Աշնանը կատարել վերանորոգումներ՝ լրացուցիչ տնկումներ նոյեմբերի 1-ից մինչև 20-ը:

16. Կատարել նորատունկ ծառերի ձևավորում հետևյալ ձևով. դեղձենին ձևավորել և տալ բաժակաձև սաղարթ, թողնելով բնի բարձրությունը 40—50 սմ, իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 4—5 հատ: Բալենուն տալ բնական սաղարթ, թողնելով բնի բարձրությունը 40—50 սմ, իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 5—8 հատ: Ծիրանենին ձևավորել Լիդերի սխեմայով, բնի բարձրությունը թողնելով 60—80 սմ, իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 5—6 հատ: Մալորենին ձևավորել լիդերային սխեմայով, թողնելով բնի բարձրությունը 60—70 սմ, իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 5—6 հատ: Կեռասենուն տալ բնական սաղարթ, բնի բարձրությունը՝ 60—70 սմ: Տանձենին ձևավորել Լիդերի սխեմայով, բնի բարձրությունը թողնելով 60—80 սմ, իսկ հիմնական ճյուղերի քանակը՝ 6—8 հատ:

Ձևավորումը, վորպես կանոն, սկսել տնկարանում և շարունակել այգում:

Ձևավորման բոլոր դեպքերում դեկավարվել ազրոնոմի ցուցմունքներով:

ՊՏՂԱՔԵՐՈՂ ԱՅԳԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

1. Պտղաբերող այգիները ջրել 4—6 անգամ, յեղնելով հողային պայմաններից և ջրի պահանջից:


2. Ծառերին նեցուկներ (հաշա) տալ, սկսած հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը:

3. Բերքը հավաքել ձեռքով, ճյուղերը չջարգել և պտուղները չփչացնել:

4. Տերևները և փտած ու կիտահա պտուղները հավաքել, այգուց դուրս հանել և այրել, սկսած նոյեմբերի 1-ից մինչև 15-ը:

5. Բները մաքրել փաած և մեռած կեղևներից և տալ կրակաթ քսել նոյեմբերի 1-ից մինչև 10-ը:

6. Ծառերի շուրջը փոբել կամ վարել 10—15 սմ խորությամբ՝ յեղնելով հողի կազմությունից, զարնանը՝



մարտի 15-ից մինչև ապրիլի 15-ը, իսկ աշնանը՝ հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը:

7. Չորացած ծառերը հանել և տեղը տնկել նորերը՝ նոյեմբերի 1-ից մինչև 20-ը:

8. Առանց հողբաժնի հատուկ թույլատվության այգիներին կենդանի ծառեր չկտրել:

Բ Ո Ւ Ժ Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Վաղ գարնանը, մինչև բողբոջների բացվելը, ծառերը սրսկել մեկ տոկոսանի բորդոյան հեղուկի և անաբազին կամ նիկոտին սուլֆատի 0,1 տոկոսանի լուծույթով, բացառությամբ լնձորենիների, վորոնք սրսկել տեղենները բացվելուց հետո (մինչև ծաղկելը) մեկ տոկոսանի բորդոյան հեղուկով, խառնելով մեկ դուլին 8 գրամ փարիզյան կանաչ:

Առաջին բուժումը պետք է ավարտել մինչև ծաղկելը:

2. 2-րդ բուժումը կատարել ծաղկաթափից հետո, բորդոյան հեղուկի և փարիզյան կանաչի լուծույթով, վերցնելով մեկ դուլ ջրին 75 գրամ պղնձարջասպ, նույն չափով կիր և 10 գրամ փարիզյան կանաչ:

Դեղձենիները սրսկել միայն բորդոյան հեղուկով:

3. 2-րդ բուժումից 15—20 ուր հետո կատարել 3-րդ բուժումը բորդոյան հեղուկի և փարիզյան կանաչի խառնուրդով, վերցնելով 10 լիտր ջրին 100 գրամ պղնձարջասպ, նույն չափով կիր և 12 գրամ փարիզյան կանաչ:

Դեղձենիները սրսկել միմիայն բորդոյան հեղուկով:

4. Լվիճներ յերևալու դեպքում սրսկել անաբազին, կամ նիկոտին սուլֆատ՝ յուրաքանչյուր մեկ դուլ ջրին խառնելով 10—12 գրամ անաբազին, կամ նիկոտին սուլֆատ և 40 գրամ տնտեսական ոճառ:

ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Շրջանում խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, կոլտնտեսականները, մենատնտեսները և հիմնարկ-ձեռնարկությունները պարտավոր են ըսնջարանացային կուլտուրաները մշակել անշեղորեն, կիրառելով հետևյալ ագրոտեխնիկական ձեռնարկումները.

ա) ԸՆԴՈՒՄՆՈՒՐ մաս

1. Մինչև փետրվարի 15-ն ավարտել ցանքերի համար անհրաժեշտ բոլոր նախապատրաստական աշխատանքները՝ սերմերի դառում, ստուգում, գործիքների նորոգում և այլն:

2. Մինչև հունվարի 15-ն ավարտել ջերմոցների վերանորոգումը և նոր ջերմոցների կառուցումը:

Այն տնտեսությունները, վորոնք ջերմոցներ չունեն, պետք է սածիլանոցի տեղը վարեն աշնանը և պարաբատցեն վաղ գարնանը, ցանքը կատարելու համար:

3. Վարը կատարել առանց խամ տեղեր թողնելու, 20 սմ վոչ պակաս խորությամբ, կոշտեր լինելու դեպքում փշրել ափսեյավոր կամ զիգ-զագ փոցխերով:

4. Աշնանավարը և վաղ գարնանը կատարած վարը կրկնավարել: Վարին և կրկնավարին հետո լավ փոցխել:

5. Հողի նախապատրաստական աշխատանքները վերջացնել ցանքից կամ սածիլելուց 10—15 որ առաջ: Վտրից առաջ և հետո մաքրել քարերը և հեռացնել հողամասից:

6. Հողի յուրաքանչյուր մշակության ժամանակ հավաքել չայիրը և զանդուրդանի տակոիկները (արմատներով) և հեռացնել հողից:

7. Հողամասը պարարտացնել գոմաղբով, կոմպոստով (խառնաղբ) կամ հանքային պարարտանյութերով: Թարմ կամ կիսաթարմ գոմաղբը մտցնել հողի մեջ աշնանը, մանավանդ վաղահաս ցանքսերի դեպքում, իսկ փտած գոմաղբը և մնացած պարարտանյութերը՝ գարնանը: Պարարտանյութերը մտցնել վարից կամ կրկնավարից առաջ:

8. Քաղհանել վոչ միայն ցանված, այլև ջրատար առուների և ճանապարհների յեղերքին առաջացած մոլախոտերը մինչև ծաղկելը, այնպես, վոր դաշտերը միշտ լինեն մաքուր մոլախոտերից:

9. Ցանքը կամ սածիլը կատարել շարքերով յերկար մարզերում, այնպես, վոր ապահովվի կանոնավոր վոռոգումը և մեքենայացումը:

10. Ցանքը կատարել տեսակավոր, լավորակ և պիտանիությունն ստուգված սերմերով:

11. Բերքահավաքը կատարել որվա հով ժամանակ և բերքն արևի տակ չըթողնել:

12. Կատարել բերքի տեսակավորում, պայքարել փչացումների և կորուստների դեմ, ապահովելով ստանդարտ տարալով:

13. Միատեսակություն հետևել, վորպեսզի հիվանդություններ և վնասատուներ հայտաբերելիս անհապաղ հայտնվի հողբաժնին, ՄՏԿ-ին, կամ ագրոխիմիկ ագրոնոմին և անմիջապես պայքար կազմակերպվի նրանց դեմ՝ ագրոնոմի ցուցմունքներով:

14. Կիրառել կանոնավոր ցանքաշրջանառություն, համաձայն հողբաժնի կողմից հաստատված տիպի:

բ). Պամիդորի մեակությունը

1. Պամիդորի համար հողը հերկել աշնանը, 20 սմ վոչ պակաս խորությամբ և գարնանը կրկնավարել:

2. Հողամասը պարարտացնել փտած գոմաղբով կամ կոմպոստով (խառնաղբ), տալով հեկտարին 30—40 տոննա:

3. Հանքային պարարտանյութեր լինելու դեպքում մտցնել հետևյալ չափով.

ա) ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ 200—300 կիլոգրամ մեկ հեկտարին.

բ) սուպեր ֆոսֆատ 350—450 կիլոգրամ մեկ հեկտարից:

Պարարտանյութերը մտցնել վարից կամ կրկնավարից առաջ:

4. Պամիդորը մշակել յերկար թմբերի վրա պակեցրած ձևով. առանց բճատման:

5. Թմբերը պատրաստել արակոորով, գութանով կամ բուլկիցով:

Թմբերը կապել յերկար, այնպես, վոր ապահովված լինի կանոնավոր վոռոգումը: Տնկել թմբերի յերկու կողմերում:

6. Թմբերի լայնությունը վերցնել հետևյալ չափով՝

ա) թմբերի մեկ կողմում սածիլելու դեպքում թմբերի լայնությունը պետք է լինի 60—70 սմ.

բ) թմբերի միջին լայնությունը՝ 40—50 սմ.

գ) թմբերի յերկարությունը՝ 5—200 մետր:

Տնկել շարքը շարքից 100—120 սմ և բույսը բույսից 20—30 սմ հեռավորությամբ, մեկ հեկտարում ապահովելով 30—40 հազար սածիլ:

7. Սածիլներ ստանալու համար ցանքը կատարելը շերմոցներում՝ փետրվարի 20-ից մինչև ապրիլի 5-ը, իսկ սածիլանոցում՝ ապրիլի 5-ից մինչև ապրիլի 15-ը:

Սածիլների սնկումը դաշտում կատարել՝ շերմոցային սածիլը մայիսի մեկից մինչև մայիսի 25-ը:

Բացոթյա սածիլը՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 5-ը:

8. Գաղհանը և փխրեցումը կատարել հողի քեշին, մշակման ընթացքում 3—4 անգամ և մեկ անգամ քոլքաշ կատարել, յեխելով մոլախոտերի զարգացումից:

9. Վար դնել մինչև ծաղկելը:

10. Ջրել ըստ կարիքի, մինչև 16 անգամ:

11. Կատարել բերքի տեսակավորում և կոնսերվիարդյունաբերությանը հանձնել համաձայն ստանդարտի:

12. Հիվանդ, փտած պտուղներն առանձնացնել, դուրս տանել դաշտից և թաղել հողում:

13. Բերքահավաքը կատարել պարբերաբար, ըստ պտուղների հասունության և վերջացնել ցրտահարությունից առաջ: Խակ մնացած պամիդորները հավաքել և լցնել փակ նիւղներում, վորտեղ նրանք կկարմրեն: Կանաչ պամիդորների մի մասն աղ ու թթու դնել:

դ) Տափեղի յեվ բադրջանի մեակումը

1. Տաքեղը և բադրջանը տնկել ուժեղ և մոլախոտերից մաքուր հողերում:

2. Հողը վարել աշնանից, 20 սմ վոչ պակաս խորությամբ և զարնանը կրկնավարել:

3. Պարարտացնել փտած գոմաղբով, կոմպոստով, կամ հանքային պարարտանյութերով, պամիդորի համար ընդունված նորմաներով:

4. Մշակությունը կատարել հարթ մարզերում:

Բադրջանը և տաքեղը տնկել շաքըր շաքից 50—60 սմ և բույսը բույսից՝ 30—40 սմ հեռավորությամբ:

Վորպես կանոն, միջաբային մշակման աշխատանքները յեխթարկել մեքենայացման, չմեքենայացնելու դեպքում տնկել շաքըր շաքից 30—40 սմ և բույսը բույսից 30—35 սմ հեռավորությամբ, այդպիսով ապահովել մեկ հեկտարում 90—100 հազար սածիլ:

5. Սածիլներ ստանալու և դաշտ փոխադրելու ժամկետները նույնն են, ինչ վոր պամիդորի համար:

6. Սածիլը տնկել, յերբ հողը հասունացել է (քեշին), տնկման խորությունը պահպանել մինչև արմատավզիկը, վորից խորը չտնկել:

7. Գաղհանը և փխրեցումը կատարել գլխավորապես նախքան ծաղկելը, ամբողջ վեգետացիայի ընթացքում կատարել 2—3 անգամ քաղհան և 2—3 փխրեցում: Ջրից հետո, յերբ հողը կեղեվակալել է, կատարել փխրեցում քեշին:

8. Բերքահավաքը կատարել պարբերաբար, ըստ բերքի հասունության և ստանդարտի: Հավաքած բերքն ամբողջապես փոխադրել դաշտից և չթողնել արևի տակ:

զ) Սոխի մեակումը

1. Սոխը մշակել ուժեղ, թեթև, թափանցիկ և միջակ խոնավություն ունեցող հողերում, միանգամայն մաքուր մոլախոտերից:

Ծանր կավային և խոնավ հողերում սոխ չմշակել:

2. Սոխը պարարտացնել փտած գոմաղբով կամ կոմպոստով, հեկտարին տալով 30—40 տոնն:

Հանքային պարարտանյութեր լինելու դեպքում հեկտարին տալ հետևյալ չափով:

ա) ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ 100—150 կիլոգրամ:

բ) սուպեր ֆոսֆատ 200—400 կգ.

գ) սիլվինիտ կամ կալիումի աղ 300—400 կգ.

3. Կալի-ֆոսֆորական պարարտանյութերի փոխարեն կարելի չե պարարտացնել մաքուր մոխրով, հեկտարին տալով 10—15 ցենտներ:

4. Սոխի հողը վարել աշնանը՝ 20 սմ վոչ պակաս խորությամբ, դարնանը կրկնահերկել և լավ փոցխել այնպես, վոր հողը լինի հարթ և առանց կոշտերի:

5. Մեկ հեկտարին ցանել 12 կգ սերմ:

6. Յերբ սոխի տերևները հասնեն 10 սմ յերկարության, կատարել 1-ին նոսրացումը:

Դաշտը մաքուր պահել մոլախոտերից, վորի համար ամբողջ վեգետացիայի ընթացքում կատարել 3—4 քաղհան:

7. Ջրել շատ զգուշությամբ, սկզբնական շրջանում քիչ, միշտ նկատի ունենալով բույսի պահանջը:

8. Բերբահավաքը կատարել սոխի տերևները լրիվ պսակելու, չորանալու և դեղնելու ժամանակ:

Հավաքած բերքը փռել բարակ շերտով արևի տակ 2—5 որ և լավ չորացնել:

ե) Կաղամբի մեակուքյունը

1. Կաղամբի համար ընտրել ուժեղ հողեր: Հողամասը պարարտացնել գոմաղբով կամ աղբով, տալով հեկտարին 40—60 տոնն:

Հանքային պարարտանյութեր լինելու դեպքում հեկտարին տալ հետևյալ չափով.

ա) ցիանամիդ կամ ամոնիում սուլֆատ 300—400 կիլոգրամ.

բ) սուպեր ֆոսֆատ 300 կգ.

գ) կալիումի աղ 30 տոկոսանի՝ 150 կգ:

2. Ուժասպառ հողերում վոչ մի դեպքում կաղամբ չտնկել:

3. Կաղամբի համար հողը հերկել աշնանը, և դարնանը կրկնավարել, իսկ յեթե աշնանը հնարավորություն չեղավ, դարնանը վարել շատ վաղ և անմիջապես փոցխել:

4. Պարարտանյութերը մտցնել վարից կամ կրկնավարից առաջ:

5. Տնկել առողջ, կարճ, հաստ և ամուր սածիլներ:

6. Սածիլները դաշտ դուրս բերել հետևյալ ժամկետներին. վաղահաս կաղամբ սածիլել մարտի 25-ից մինչև ապրիլի 25-ը:

Ուշահաս կաղամբը սածիլել մայիսի 25-ից մինչև հունիսի 20-ը: Միջահաս կաղամբը սածիլել այդ յերկուսի ժամկետների միջև ընկած ժամանակամիջոցում:

7. Կաղամբը մշակել հարթ մարզերում, շարքը գծել ըստ յերկարության:

8. Սածիլներ տնկել հետևյալ հեռավորությունների վրա.

ա) վաղահասը՝ շարքը շարքից 50—60 սմ և բույսը բույսից՝ 30—40 սմ.

բ) միջահասը՝ շարքը շարքից 50—60 սմ և բույսը բույսից՝ 40—50 սմ.

գ) ուշահասը՝ շարքը շարքից 70—80 սմ և բույսը բույսից՝ 40—60 սմ:

Այսպիսով մեկ հեկտարում վերանորոգման հետ միասին աղահովել վաղահաս՝ 40—50 հազար սածիլ, միջահաս՝ 30—40 հազար սածիլ, ուշահաս՝ 25—30 հազար սածիլ:

9. Սածիլել ամպամած որերին, իսկ պարզ որերին սածիլ կատարել վաղ առավոտյան և յերեկոյան ուշ ժամանակ:

10. Սածիլը կպչելուց և ամրանալուց հետո կատարել առաջին փխրեցումը, հետագա փխրեցումները կատարել ըստ կարիքի, շրջելուց հետո, հողի քեշին:

11. Առաջին փխրեցումից 10 որ հետո կատարել 1-ին բուկիցը:

12. Ամբողջ մշակության ընթացքում ըստ կադամբի տեսակի կատարել 1—2 անգամ բուկից և 2—3 անգամ քաղհան, ախպես, վոր հողը միշտ մաքուր լինի մոլախոտերից:

13. Բերքահավաքից հետո դաշտից հավաքել և հեռացնել կադամբի մնացորդները և այրել, իսկ հողամասն անմիջապես վարել:

գ) վարունգի մեակումը

1. Վարունգի համար հատկացնել տաք, թափանցիկ, ուժեղ և վոչ խոնավ հողերը: Վարունգի համար շատ լավ են խամ հողերը:

2. Ծանր կավային և թույլ հողերում վարունգ չցանել:

3. Վարունգի դաշտը պարարտացնել փթած գոմաղբով կամ կոմպոստով, հեկտարին տալով 30—40 տոնն:

4. Հողը հերկել աշնանը 20 սմ խորությամբ, գարնանը կրկնավարել և փոցխել:

5. Ցանքը կատարել ցրտահարությունների վտանգն անցնելուց հետո՝ ապրիլի 20-ից հետո:

6. Ծիլերը յերկու տերևանի դառնալուց նոսրացնել և կատարել վերանորոգում: Վար դնել և բուկը լցնել 4—5 տերև ունենալուց հետո:

7. Մինչև ծաղկելը հնարավորության սահմաններում ջրել, պտղաբերության շրջանում ջրել հաճախակի, ըստ կարիքի:

8. Վեգետացիայի ընթացքում կատարել 2—3 փխրեցում և 2—3 քաղհան:

9. Հիվանդություններ և վնասատուներ հայտարելու անմիջապես հայտնել ագրոնոմին և անհապաղ պայքարել նրա ցուցմունքներով:

10 Բերքահավաքը կատարել ամեն 2—3 որը մեկ անգամ: Հավաքած բերքը տեղափոխել դաշտից և չթողնել արևի տակ ու անմիջապես հանձնել արտադրությունը (կոնսերվատացիայի դեպքում):

11. Բերքահավաքից հետո մնացորդները հավաքել և այրել:

ե) Բանջարեղենի ամբարումը

1. Բանջարապահեստները դատարկելուց հետո, վաղ դարնանն ախտահանել և ամբողջ ամառը պահեստը լավ ողափոխել:

Ախտահանումը կատարել ՄՏԿ-ի ագրոնոմների ցուցմունքներով:

2. Ամառվա ընթացքում պահեստները վերանորոգել:

3. Աշնանը պահեստն ախտահանել և ապա բանջարեղեն լցնել:

4. Ամբարվելիք բանջարեղենը խնամքով տեսակավորել:


5. Պահեստում կառուցել ողհաններ և ունենալ ջերմաչափեր՝ ջերմությունը կանոնավորելու համար:

6. Պահեստներում պատրաստել դարակներ:

7. Ամեն որ հետևել բանջարապահեստներին և ըստ ախմ ջերմաստիճանները կանոնավորել ողհանների միջոցով:

Ամենալավ ջերմաստիճանը բանջարեղեն պահելու համար ընդունել 1,5-ից մինչև 4 աստիճան Ցելսիուսի:

4092



Արքագրեր՝ Գ ա ռ. Հ ա կ ո ղ յ ա ն

Դրամիտի լիտեր № 1144, հրատ. № 6, պատվեր № 118, տիրաժ 1000

Հանձնված է արտագրության 2 փետրվարի 1937 թ.

Պատրաստված է ապագրելու 11 փետրվարի 1937 թ.

Դյուզնատի տպարան, Յերեան, Նալբանդյան 11.

ՀՀ Ազգային գրադարան



NL0291875

105

19.513

4050 30 4.



Обязательные правила
о
Виноградных и фруктовых
садах и об огородничестве на 1937 г.
по Камарлинскому району

Сельхозгиз

1937

Ереван